

«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N° 135
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի կողմից սովորողների ուսուցման ու
դաստիարակության պետական և այլանավորումը՝ առարկայական հանրակրթության
համապատասխան չափորոշիչներին

Առարկա՝ Մաթեմատիկա

Ուսուցիչ՝ Երևանի Կ. Դեմիրճյանի անվան թիվ 139 ավագ դպրոց
Նարինե Ալբերտի Պողոսյան

Վերապատրաստող՝ Սմբատ Գոգյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզանից յուրաքանչյուրն իր գոյությունը պահպանելու, կենցաղը ապահովելու համար կարիք ունի սնվելու, հագնվելու, տեղաշարժվելու: Մեր այս և այլ կարիքները մենք ապահովում ենք զանազան իրերի ու առարկաների միջոցով, որոնք, բնականաբար, մեզ համար ունեն որոշակի արժեք: Սակայն մեզ համար արժեք կարող են ունենալ ոչ միայն իրերը, այլև մեր մտքերը, հիշողությունները, զանազան գաղափարներ, երևույթներ: Արժեքների աշխարհը բազմազան է: Մեր ունեցած նյութական, հոգեկան, բարոյական, ճշմարտային, գեղագիտական, կրոնական, ազգային և այլ արժեքները կազմում են մեր արժեքային համակարգը և պայմանավորում են մեր արժեքային կողմնորոշումը:

Կրթական հաստատություններում ստացած գիտելիքներն ու կարողությունները նույնպես արժեքներ են, որոնք կազմում են կրթական արժեքների մի մասը: Ժամանակակից կրթական համակարգերը միտված են դեպի հոգևոր արժեքները: Դրանց խնդիրը ապագա քաղաքացուն անհրաժեշտ արժեքների համակարգի որոշումն է և համապատասխան արժեքային կողմնորոշման ձևավորումը:

Մաթեմատիկական կրթությունը, այսօր ոչ միայն և ոչ այնքան մաթեմատիկայի ուսուցում է, մաթեմատիկական գիտելիքների և կարողությունների ուսուցման գործընթաց, այլ մաթեմատիկայի ուսուցման միջոցով սովորողներին կրթելու՝ նրանց արժեքային համակարգը, արժեքային կողմնորոշումը ձևավորելու գործընթաց: Եվ մաթեմատիկական այս տեսակետից ունի կրթական մեծ ներուժ. այն ի զորու է իր վճռական խոսքը ասելու ապագա քաղաքացու արժեքային ողջ համակարգի ձևավորման և զարգացման գործընթացում: Պետք է նկատի ունենալ, որ մաթեմատիկական շատ նյութերի՝ սովորողներին տված մաթեմատիկական գիտելիքն ու կարողությունը ամենևին էլ կարևոր չեն ապագա քաղաքացու համար: Մինչդեռ այդ նյութերը ձևավորում ու զարգացնում են հոգեկան, ճշմարտային, բարոյական, գեղագիտական, ազգային և այլ արժեքներ, որոնց համակարգն էլ պայմանավորում է ապագա քաղաքացու արժեքային կողմնորոշումը: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ ի տարբերություն գիտելիքի և կարողության,

հոգևոր արժեքների ձևավորումը շատ բարդ գործընթաց է և իրականացվում է հետևողական ու երկարատև դաստիարակչական աշխատանքի արդյունքում :

Այն, ինչ մի ժամանակ թվում էր հավերժական և անփոփոխ ճշմարտություն, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ սխալ¹:

Հայաստանում իրականացվող կրթական վերափոխումները նոր խնդիրներ են դնում ուսուցիչների առջև: Որքան էլ գնահատելի ու կիրառելի է անցյալի փորձը, միևնույնն է՝ փոփոխություններն անխուսափելի են: Դպրոցն ու ուսուցիչը վակուում չեն գործում: Նրանք միշտ գործում են կոնկրետ արժեքային համակարգում, կոնկրետ ժամանակում և միջավայրում: Հենց այս հանգամանքն էլ ենթադրում է, որ ուսուցիչն անընդհատ սովորելու, ժամանակի պահանջներին համաքայլ ընթանալու խնդիր ունի: Այժմ Հայաստանը թևակոխել է կրթության բովանդակային բարեփոխումների փուլ: Այսօր դասապրոցեսի և արտաքին աշխարհի առնչությունները ավելի անմիջական են, ինչը նշանակում է, որ անհնար է արդյունավետ դասավանդել առանց հասկանալու և հաշվի առնելու, թե ինչպես է փոխվում աշխարհը:

Ուսուցչին ներկայացվում են մի շարք մանկավարժական պահանջներ: Նախ և առաջ ուսուցիչը պետք է խորապես տիրապետի այն առարկան, որն ինքն է դասավանդում: ու երբեք չպետք է բավարարվի ձեռք բերած գիտելիքներով, իր ունեցածով, այլ անընդհատ համալրի իր գիտելիքները, ընդարձակի մտահորիզոնը: Իր մասնագիտական առարկան դասավանդող ուսուցիչը պարտավոր է իմանալ նրա բովանդակության թեկուզ ամենաչնչին թվացող, անգամ չերևացող մասնիկը, իմանալ և՛ գլխավորը, և՛ երկրորդականը: Չէ որ դրանք և իրեն են պետք, և՛ իր աշակերտներին: Իմաստությունն ասում է. «Նախ քեզ ստիպիր, հետո ուրիշին»:

Պարզապես ուսուցիչը պետք է ընտրի **ինչից հրաժարվել, ինչը պահել, ինչը սովորել ուրիշներից, որովհետև աշակերտին** պատրաստում է բավականին մեծ ժամանակային հեռավորության վրա գտնվող ապագա հասարակության համար: Սրա հետ մեկտեղ անհրաժեշտ է այնպիսի ուսումնախմայական գործունեության

¹ Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն 2005

կազմակերպում, որը կխթանի աշակերտի ակտիվ ներգրավվածությունը գիտելիքների, հմտությունների և կարողությունների տիրապետման, ստեղծագործական ունակությունների զարգացման, աշխարհայացքի և արժեքային համակարգի ձևավորման գործնթացին: Ուսուցիչը պետք է օգտագործի ժամանակակից գիտական տեղեկատվության հնարավորությունները, նրա հզոր «հեղեղից» ջրկի, ընտրի նպատակահարմարը, կարևորը և այդ ուղիով նույնպես հարստացնի իր գիտելիքների պաշարն ու միաժամանակ իր սաներին ուսուցանի, թե զանգվածային տեղեկատվությունից ինչը վերցնի, ինչը՝ ոչ: Ու այս ամենը մեկ նպատակի համար. այն է՝ անընդհատ համալրի գիտելիքների պաշարը: Իրոք, գիտելիքները հայտնագործվում են գիտելիքներով: Իսկ եթե մտապահված գիտելիքներ չկան, ավելորդ է խոսել նոր գիտելիքներ հայտնագործելու մասին: Ահա թե ինչու Նապոլեոնը գիտելիքը համարում էր խելքի բուրգ:

Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, բազմակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև պիտի կարողանա իր այդ ունեցածը դարձնել սովորողների սեփականությունը: Այդ հիմնախնդիրը կարելի է լուծել ուսուցման և դաստիարակության գործընթացները օպտիմալացնելու, նոր մեթոդներ հայտնագործելու, հին մեթոդները կատարելագործելու, դրանք կիրառելիս նորին զուգակցելու, ուսուցման արդի տեխնիկական միջոցները լայնորեն օգտագործելու միջոցով: Այլ կերպ ասած, ուսուցիչը դպրոցականների ուսուցումը, դաստիարակությունը և զարգացումը պետք է բարձրացնի նոր աստիճանի՝ օգտագործելով դրանց տեխնոլոգիաները ընձեռած բոլոր հնարավորությունները:

Կասկած չկա, որ շատ բան կախված է հաստատուն, ընդհանուր կարգ ու կանոնից, բայց ամենագլխավորը միշտ էլ կախված է սանի դեմ հանդիպման կանգնած դաստիարակի ամբողջական անձնավորությունից: Մատաղ հոգու վրա դաստիարակի ազդեցությունը կազմում է դաստիարակչական այն ուժը, որը չի կարելի փոխարինել ոչ դասագրքերով, ոչ բարոյական խրատներով, ոչ էլ պատիժների ու խրախուսանքի համակարգով:

Ուսուցիչը՝ իր սանի ապագան, հեռանկարը կանխագուշակելու ընդունակությունն է: Ուսուցիչը պետք է հավատա իր սանի և ուսման, և դաստիարակության հաջողությանը: Առանց դրանց անհնար է կանխագուշակել դպրոցականի ապագան, հեռանկարը, առաջընթացը:

Ժամանակակից դպրոցի առջև խնդիր է դրված դաստիարակությանը տալ համընդհանուր, գլոբալ նպատակային բնույթ և ապահովել դպրոցականի բազմակողմ և ամբողջական դաստիարակությունը:

Դաստիարակության հարցն այսօր շատ լուրջ է, քանի որ ներկա սերունդն ավելի շատ տեղեկատվություն ունի, շուտ է զարգանում, ուստի հատուկ մոտեցում է պետք նրանց :

Դաստիարակության նպատակի հիմնախնդիրը եղել և մնում է մանկավարժագիտության առանցքային խնդիրներից մեկը: Այն դաստիարակողի և դաստիարակվողների նպատակասլաց գործունեությունն է, որի շնորհիվ լուծվում են դաստիարակվողների անձի ձևավորման, զարգացման հիմնախնդիրները:

Դաստիարակության գործընթացում դաստիարակը պարտադիր կարգով պետք է հաշվի առնի երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, դաստիարակը պարտադիր կարգով պետք է հաշվի առնի երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները, դաստիարակության պայմանները նրանց համար ստեղծված իրավիճակները: Դաստիարակողն ամենայն մանրամասնությամբ պետք է վերլուծի, սինթեզի ընտանիքից, միջավայրից, շրջապատից դեպի երեխան եկող ներգործությունները, ճիշտ ընտրի դաստիարակության մեթոդները, հնարներն ու միջոցները, անդադրում ուսումնասիրի դաստիարակության տեսությունն ու պրակտիկան, վարպետած հմուտ դաստիարակների փորձը:

Դաստիարակչական աշխատանքները ճիշտ կազմակերպելու և արդյունավետ ուսուցում իրականացնելու երաշխիքներից է նաև դասարանում առողջ մթնոլորտի առկայությունը, որի ձևավորման գործում որոշիչ դեր ունեն ուսուցչի ղեկավարման ոճը, անձնային որակները, հաղորդակցական հմտությունները, դասարանը համախմբելու և աշակերտների առաջ ընդհանուր նպատակներ դնելու,

աշակերտների միջև ոգևորություն առաջացնելու և նրանց գործունեության մղելու կարողությունները: Ուսումնական գործնթացի վրա մեծ ազդեցություն է գործում հատկապես ուսուցչի ղեկավարման ոճը: Ղեկավարման ոճը ղեկավարման մեթոդների իրացման այն ձևն է, որ որդեգրում է ուսուցիչը իր անձնային հոգեբանական բնութագրային համապատասխան, և կախված է այնպիսի արտաքին գործոններից, ինչպիսիք են դասարանի՝ որպես կոլեկտիվի, նպատակներն ու խնդիրները, աշխատանքի ընդհանուր պայմանները, իրադրությունը և այլն:

Իրականում դաստիարակության գործառույթը անհրաժեշտ է իրականացնել ոչ թե աշակերտի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան խրատնել տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքներ հետևողական ձևավորմամբ:

Հարկ է նկատել, որ նման արժեքների ձևավորումը կազմում է հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկայի կրթական ներուժի կարևոր մաս: Հանրակրթական դպրոցի «մաթեմատիկա» ուսումնական առարկան նման արժեքների ձևավորման հսկայական ներուժ ունի:

Արժեքային համակարգն ընդհանուր առմամբ արտահայտվում է սովորողի՝ որպես անձի և քաղաքացու ցուցաբերած վերաբերմունքի, դիրքորոշման, վարքի և գործելակերպի միջոցով: Հասկանալի է, որ այդպիսի համակարգի ձևավորումը ներառարկայական խնդիր չէ, այն պայմանավորված է բազմաթիվ գործոններով:

Սակայն յուրաքանչյուր ուսումնական բնագավառ, այդ թվում և մաթեմատիկան, էական ներգործություն ունի այդ համակարգի վրա, և շատ կարևոր է, որ հստակեցվի, թե ինչ ուղղությամբ է ընթանալու այդ նեգործությունը: Անձի և քաղաքացու ձևավորման, նրա ինքնահաստատման գործընթացում շատ արժեքներ կարող են ձեռք բերվել հատկապես մաթեմատիկայի ուսուցման միջոցով, իսկ որոշ արժեքների համար, կարելի է ասել, որպես առաջատար առարկա է ծառայում հենց մաթեմատիկան: Ճիշտ կազմակերպելու դեպքում **մաթեմատիկան կրթությունը մարդուն զինում է պլանների, նպատակների նախանշման և դրանց իրականացման համար անհրաժեշտ հոգևոր որակներով, և, հետևապես, նպաստում է նրա մոտ**

լավատեսական որակների ձևավորմանը: Ընդհառակը, երբ կրթությունը ճիշտ չի կազմակերպվում, և սովորողը չի զինվում այն հոգևոր որակներով, որ կարող է տալ մաթեմատիկական կրթությունը՝ կյանքի պայմաններում գործելու համար, մասնավորապես՝ երբ պարբերաբար ստանալով իր ուժերից վեր առաջադրանքներ, չի կարողանում դրանք իրականացնել, նա վատատես դառնալու լուրջ պատճառներ կարող է ունենալ:

Մաթեմատիկական կրթություն ստանալու համար պահանջվող երկարատև գործունեությունը, հավանաբար, քիչ ցանկություն է թողնում ընտանիքը, ընկերությունը, բարեկամությունը կարևորելու և դրանց հետ շփումների համար: Աշխատանքային միջավայրում կրթության մաթեմատիկական բաղադրիչը մարդուն կարող է օգնել ժամանակ չծախսել ավելորդ զրույցների համար, ավելի մեծ ուշադրություն դարձնել մասնագիտական գործունեությանը:

Մաթեմատիկական առանձին խնդիրների լուծման համար ցուցաբերած համառությունը, հետևողականությունը, մտքի երկարատև լարումը, որ հանգեցնում են անհրաժեշտ արդյունքի, ոգու արիության դրսևորումներ են, որոնք բարձրացնում են մարդուն, մեծացնում նրանում ոգեղեն արժեքը:

*Մաթեմատիկական դասընթացներում ներառված բանաձևումները, խնդիրները և վարժությունները միշտ ունեն ապացուցումներ և լուծումներ, որոնց կարելի է հասնել հետևողական աշխատանքի արդյունքում: Սա աշակերտի մոտ հույսի արժեքի ձևավորման հրաշալի նախադրյալներ է առաջացնում:

*Մաթեմատիկայի ուսուցումը հնարավորություն է տալիս նաև կազմակերպել աշակերտների փոխօգնություն վարժությունների և խնդիրների լուծման, թեորեմների ու դրանց ապացուցումների ըմբռնման և այլ պարագաներում, ինչը կարող է նպաստել բարու որակի ձևավորմանը աշակերտներից մեկի մոտ՝ անշահախնդիր օգնություն ցույց տալու, իսկ մյուսի մոտ՝ երախտագիտության զգացմունքի դրսևորման միջոցով, ինչը նույնպես բարության հատկանիշ է: Նման գործընթացը աշակերտների մոտ կարող է ձևավորել նաև բարու այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բարյացակամությունը և հարգալից վերաբերմունքը:

*Մաթեմատիկական կրթությունից մեծապես կախված է սովորողի վերաբերմունքը իր մտավոր ունակությունների նկատմամբ: Կրթական խնդիրների ճիշտ իրականացման դեպքում այն աշակերտին կարող է տալ ինտելեկտուալ ազատություն, ինքնավստահություն, հավատ սեփական ուժերի, մտավոր կարողությունների նկատմամբ: Իսկ հակառակ դեպքում սովորողի մոտ կարող են առաջանալ թերարժեքության զանազան բարդույթներ, որոնց հաղթահարումը կապված կլինի մեծ դժվարությունների հետ:

*Խոսքի կուլտուրայի ձևավորման համար առաջնային նշանակություն ունի մայրենի լեզվի իմացությունը. մայրենիի ճիշտ դրվածքը և իմացությունը բոլոր ուսումնական առարկաների յուրացման առաջին նախապայմանն է: Անգամ մաթեմատիկայի տեքստային խնդիրը չլուծելու պատճառը շատ դեպքերում մայրենի լեզվով տեքստի ընկալման անկարողությունն է դառնում: Մաթեմատիկական կրթությունը նպաստում է մայրենի լեզվի իմացության խորացմանը: Պակաս կարևոր չէ մաթեմատիկական լեզվի իմացությունը:

Հանրակրթության ուսումնական առարկաների ,ձևակերպված դրույթների ճիշտ ընկալումը մեծապես կախված է դրանց մաթեմատիկական մոդելավորումից, մաթեմատիկական լեզվի իմացությունից: Այս տեսակետից մեծ նշանակություն ունի մաթեմատիկայի մատուցումը որպես իրական աշխարհի ուսումնասիրության համար կառուցված լեզու:

Հետևապես՝ պետք է կարևորել այլ առարկաների և, հատկապես, հայոց լեզվի հետ մաթեմատիկայի միջառարկայական կապերի ճիշտ կազմակերպումը:

*Մաթեմատիկական հասկացությունների, դատողությունների ու մտահանգումների հստակությունը և մաքրությունը. գեղեցիկի լավագույն դրսևորումներ են, և դրանց ընկալման համար պահանջվող հոգևոր լարումը լավ հող կարող են նախապատրաստել գեղագիտական արժեքների զարգացման համար: Միաժամանակ, պատկերների ու մարմինների, դրանց ձևափոփոխությունների, մասնավորապես՝ համաչափության ուսումնասիրությունը, որ կատարվում է երկրաչափության դասընթացում. հնարավորություն են տալիս ընկալել ճարտարապետական և գեղագիտական այլ արժեքներ:

*Մաթեմատիկական կրթությունը մասնակցում է նաև բարու, հարգանքի, արդարության, առաքինությունների և բարոյական այլ արժեքների ձևավորման ու զարգացման գործընթացին:

Ինչու չէ, մաթեմատիկական կրթությունը կարող է նաև իր բացասական ազդեցությունն ունենալ որոշ աշակերտների վրա, քանի որ մաթեմատիկայի ուսուցումը հղի է մեծամտության և նախանձի՝ չարը ծնող որակների ձևավորման վտանգով: Այս որակները ի հայտ են գալիս հատկապես այն դեպքում, երբ ուսուցումը ուղեկցվում է կամ վեր է ածվում վարժությունների ու խնդիրների լուծման միջոցով մաթեմատիկական ընդունակությունները ցուցադրման, համեմատության կամ դրանց միջոցով աշակերտների միջև մրցման անուղղակի կազմակերպման: Իսկ նախանձը ի հայտ է գալիս համեմատության ընթացքում: Ոչ ընդունակ աշակերտների մոտ կարող է առաջանալ նաև առարկայի և ունակ աշակերտների նկատմամբ ատելություն, ինչը չարը ծնող հատկանիշ է: Իսկ ունակ և առաջադիմող աշակերտների մոտ կարող է ի հայտ գալ մեծամտություն, որը նույնպես չարը ծնող հատկանիշ է:

Անդրադառնանք մաթեմատիկայի դասավանդման գործընթացի միջոցով սովորողների մոտ արդարության բարոյական որակի ձևավորման խնդրին: Մաթեմատիկական դատողությունները և մտահանգումները հիմնականում ընկալվում են որպես արդար գործընթացներ, քանի որ դրանք ունեն իրենց տրամաբանական հիմնավորումները կամ ապացուցումները: Հետևապես՝ մաթեմատիկայի ուսուցումը սովորողների մոտ հիմնավորված ապացուցումների և փաստարկումների կարողությունների ձևավորման և զարգացման խնդիրների իրագործմամբ, նպաստում է նաև արդարության բարոյական որակի ձևավորման գործընթացին: Մաթեմատիկայի դասավանդման գործընթացի հետ կապված շատ հարցեր անմիջականորեն առնչվում են հավասարության հասկացության հետ և իրենց անդրադարձն ունեն սովորողների մոտ արդարության բարոյական որակի ձևավորման գործում:

Այսպիսով, առարկայական չափորոշչով նախատեսված գիտելիքների, կարողությունների և հմտությունների հետ մեկտեղ, մաթեմատիկայի ուսուցումը

նպատակատղված է սովորողների համար ապահովել հետևյալ որակական պահանջները՝

«Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայի ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- գիտակցի թվի դերը առօրյա կյանքում, ռացիոնալ և իռացիոնալ թվերի առաջացման պատմական անհրաժեշտությունը և իրական կյանքում դրանց նշանակությունը.
- կարևորի եռանկյունաչափության դերը և դրա օգտակարությունը գործնական խնդիրներում.
- գիտակցի ինչ է ֆունկցիոնալ առնչությունը իրական կյանքում, ինչպես կարող է այն հանդես գալ և կարևորի դրա հատկությունների վերլուծությունը՝ մտահանգումներ և եզրակացություններ կատարելու համար,
- կարևորի հավասարության և անհավասարության դերը իրական կյանքում,
- գիտակցի երևույթները զննելու, քննարկելու, վերլուծելու, տրամաբանական մտահանգումներ կատարելու, փոխկապակցված մտքերի հաջորդականություն մշակելու, եզրահանգումներ կատարելու կարևորությունը, ինչպես նաև կարևորի ընդհանուրից մասնավորի և հակառակը՝ մասնավորից ընդհանուրի անցնելու նշանակությունը,
- գիտակցի մտքերը ճշգրիտ և հստակ ձևակերպելու անհրաժեշտությունը, ուրիշի մտքերը գնահատելու և կիրառելու կարևորությունը,
- կարևորի նպատակասլացությունը խնդիրներ լուծելիս, ունենա վստահություն սեփական ուժերի հանդեպ, օժտված լինի կազմակերպչական ունակություններով, ցուցաբերի պատրաստակամություն և նախաձեռնություն ,
- տարբեր իրավիճակներում գիտակցի սեփական քայլերը գնահատելու կարևորությունը, ցուցաբերի պարտաճանաչություն և պատասխանատվության բարձր զգացում գործի նկատմամբ,
- հարցեր քննարկելիս առաջնային համարի օբյեկտիվությունը, օպտիմալությունը, ստեղծագործական մոտեցումը, ոչ ստանդարտ իրավիճակներում լուծումներ գտնելու, տարբեր պահերին արագ կողմնորոշվելու, հայտնաբերելու կարողություն

դրսևորելու, երևակայական որակներ, ինքնուրույն մոտեցում, հնարամտություն, մտքի ճկունություն ցուցաբերելու կարևորությունը,

- գնահատի սեփական «ես»-ը գիտակցի սեփական գործի կարևորությունը, կարողանա պլանավորել իր գործը, նպատակներ դնել, ծրագրեր ստեղծել իր համար, մշակել նպատակներին հասնելու ճանապարհներ և եղանակներ, ժամի, օրվա, տարվա և առօրյայի ճիշտ և արդյունավետ պլանավորում կատարել:

Երկրաչափության ուսումնասիրման շնորհիվ սովորողը պետք է՝

- գիտակցի ճշգրիտ գիտելիքների կարևորությունը, դրանց կիրառության արդյունավետությունը առօրյա կյանքում և աշխատանքներում ,
- կարևորի գրավոր և բանավոր խոսքի հստակությունը, ճշգրտությունը, հակիրճությունը, մատչելիությունը,
- գիտակցի գծապատկերների, նշանների, պայմանանշանների դերը հաղորդակցման մեջ, ձգտի ընդլայնել արտահայտման ոչ խոսքային միջոցների գործածման շրջանակը,
- չլինի դյուրահավատ՝ կարևորի փաստերի հավաստիությունը և փաստարկների անհրաժեշտությունը, չցուցաբերի ավելորդ կասկածամտություն՝ կարևորի փաստարկների բավարարությունը և հետևությունների հիմնավորվածությունը,
- զգա համաչափ ու ներդաշնակ պատկերների գեղեցկությունը, մտածողության կարգավորված ընթացքի նրբագեղությունը, ձգտի գործել՝ գեղագիտական հաճույք վերապրելով,
- գիտակցի համամարդկային և ազգային մշակութային արժեքների ստեղծման մեջ երկրաչափական պատկերացումների դերը, ձգտի այդ արժեքները ընկալել, պահպանել, կատարելագործել, ժառանգել,
- գնահատի ճշմարտությունը, արդարությունը, ազնվությունը, արժանապատվությունը, ցուցաբերի դրանք պաշտպանելու վարքագիծ, անկանխակալ տեսակետ հայտնելու պատասխանատվություն,
- գնահատի ստեղծագործական երևակայությունը, ձգտի կապեր հաստատել երևակայական պատկերացումների և իրականության միջև, առօրյա կյանքում մերժի գորշ իրապաշտությունը,

- կարևորի իրատեսական նպատակներ և խնդիրներ դնելը, բարեխիղճ և կենտրոնացած աշխատանքը, ձգտի նպատակին հասնելու համար գործադրել թույլատելի միջոցներ:

Եզրակացություն

Այսպիսով՝ նշվածներից ելնելով՝ ավելի համահավաք ու բովանդակալից է դաստիարակության սահմանումը:

Դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական փորձի փոխանցման գործընթացն է՝ նրանց կյանքի ու աշխատանքի նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար:

Պետք է հիշեցնել Գալիլեյի խոսքերը՝ «Բնության ոսկե գիրքը գրված է մաթեմատիկայի լեզվով» և այդ գիրքը կարդալու համար մաթեմատիկական լեզվի

իմացությունը պարտադիր է: Ոչ մի նշանակություն չունի, թե դպրոցականն ինչպես է սովորում: Հոգու աչքերով պետք է տեսնել և հոգու կանչով կռահել նրա աստեղային ոգին, նրա հզոր «միջուկը»:

Ինչպես տեսանք, անձի և քաղաքացու ձևավորման, նրա ինքնահաստատման գործընթացում շատ արժեքներ կարող են ձեռք բերվել հատկապես մաթեմատիկայի ուսուցման միջոցով: Այս առումով էլ արժեքային համակարգի ձևավորումը դիտվում է որպես չափորոշչային պահանջ, դրա ապահովումը՝ որպես ուղեկցող նպատակի, կարևորվելու է յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության ընթացքում:

Օգտագործված գրականություն

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն 2005
2. Հ. Ս. Միքայելյան, Մաթեմատիկական կրթությունը և սովորողների հոգեկան կոփումը
3. Մաթեմատիկան դպրոցում թիվ 2, 3, 2010